## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/154 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **21 հունվարի 2026թ.**

2025թ. դեկտեմբերի 25-ից 2026թ. հունվարի 21-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ աուդիտորական ծառայության ձեռքբերման թիվ ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/154 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին Մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ն. Հակոբյան՝ Մեծամոր համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ,

Լ. Մուրադյան՝ Մեծամոր համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ,

Ք. Գալստյան՝ Մեծամոր համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ,

Կ. Գրիգորյան՝ Մեծամոր համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի առաջատար մասնագետ,

Թ. Աբգարյան՝ Մեծամոր համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Հակոբյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Վարդանյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր հինգ անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի Մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված Մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի դեկտեմբերի 25-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 15:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված ձեռքբերվող գնման առարկա/ներ/ի գնման գինը/գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Աուդիտորական ծառայություն | 8000000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Քրոու Արմենիա» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, «Դոմ Մոսկվի» բիզնես կենտրոն, Արգիշտի փ. 7, 2-րդ հարկ | 099-54-33-88, 060-53-23-23 | procurement@crowe.am | 02618043 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին ինչպես նաև արձանագրեց, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ **«Քրոու Արմենիա» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված.

- «Դիմում հայտարարության» փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, բացակայում է Մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը:
- Հայտում բացակայում է ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի 2) «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված և պահանջվող տեղեկատվությունը, համաձայն՝ հավելված N 1.1-ի, ինչպես նաև ներկայացված համապատասխան գործատուի կողմից ստորագրված երաշխավորության մասին ստորագրված գրավոր հավաստիացումը՝ «Ներքին աուդիտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին թերի է ներկայացված, մասնավորապես՝ նշված փաստաթղթում չկա տեղեկատվություն մասնագետների մասին, միաժամանակ՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված աուդիտորների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին փաստաթուղթը ներկայացված է թերի, մասնավորապես՝ բացակայում է իրականացվելիք աշխատանքների մասին հստակ տեղեկատվությունը: Բացակայում է նաև առաջադրված աշխատակազմում ներգրավված աուդիտորների անձնագրերի պատճենները և Մասնակցի կողմից հայտարարություն այն մասին, որ ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ: Ներկայացված «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի, փորձնակի և մասնագիտական ուսուցում անցնող աշակերտի անհատական տվյալների գրանցման հայտի ձև»-ը բոլոր մասնագետների մասով հաստատված չէ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ: Առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետներից առնվազն 6-ը պետք է ունենան Հայստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում, սակայն ներկայացված մասնագետներից Հրաչյա Հովհաննիսյանը, Քնարիկ Սաֆարյանը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկից բացակայում են: Միաժամանակ, հայտում բացակայում է ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորման (Certified Internal Audit-CIA) վկայական կամ Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (the Association of Chartered Certified Accountants - ACCA) լիիրավ անդամի վկայական ունեցող մասնագետ, սակայն Հրաչյա Հովհաննիսյանի ինքնակենսագրականում նշված է որ նա 2006 թվականից առ այսօր հանդիսանում է ACCA, FCCA (Հավաստագրված լիազորված հաշվապահների ասոցիացիա) Լիիրավ անդամ, Հայաստանի Հանրապետության լիցենզավորված աուդիտոր, սակայն որակավորումները հավաստող տեղեկատվությունը բացակայում է: Ինչպես նաև Քնարիկ Սաֆարյանի ինքնակենսագրականում նշված է, որ նա ընկերությունում ունի 3 տարվա աշխատանքային փորձ և ունի Ներքին աւդիտորի, Երդվյալ

հավատարմագրված հաշվապահների ասոցիացիայի մասնագիտական մակարդակի ուսանող-անդամ (ACCA), Հայաստանի Հաշվապահների և Աուդիտորների Պալատի լիիրավ անդամ որակավորումներ, սակայն աշխատանքային փորձը դաշտում նշված է, որ աշխատում է 2021 թվականից, իսկ որակավորումները հավաստող տեղեկատվությունը բացակայում է: Ինչպես նաև, Արտակ Թորոսյանի ինքնակենսագրականում նշված է, որ նա ունի գնումների համակարգողի որակավորում, սակայն ՀՀ ՖՆ-ի կողմից հրապարակված «Գնումների որակավորված մասնագետների ցանկ»-ի ուսումնասիրությունից հետևում է, որ Արտակ Թորոսյանի տվյալները բացակայում են, իսկ հանրային հատվածի գլխավոր հաշվապահի և ներքին աուդիտորի որակավորումները հավաստող տեղեկատվությունը բացակայում է: Վիգեն Խաչատրյանի ինքնակենսագրականում նշված է, որ նա ընկերությունում ունի 2.5 տարվա աշխատանքային փորձ, սակայն աշխատանքային փորձը դաշտում նշված է, որ աշխատում է 2021 թվականից: Նշվածով պայմանավորված, տրամադրված փաստաթղթերի բովանդակության մեջ առկա են անհամապատասխանություններ:

- Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի 2) կետով պահանջվող նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի շրջանակում ներկայացված պայմանագիրը պակաս է ընթացակարգի շրջանակում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի 50 (հիսուն) տոկոսից, ինչպես նաև բացակայում է պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող փաստաթղթերի (հանձման-ընդունման արձանագրություն, ակտ, հարկային հաշիվ, հաշիվ վավերագիր և այլն կամ տեղեկանք) պատճենները:
- Բացակայում է ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի 4) կետով պահանջվող Մասնակցի կողմից հաստատված հայտարարությունը, առ այն, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գին | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | | | արժեք | ԱԱՀ | ընդհանուր գինը |
| 1 | Աուդիտորական ծառայություն | «Քրոու Արմենիա» ՍՊԸ | 8000000 | 6400000 | 1280000 | 7680000 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2026թ. հունվարի 12-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները, նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանություն/ներ/ը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. հունվարի 14-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:
Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. հունվարի 14-ին, Հանձնաժողովը որոշեց.
1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը՝ Պաշտոնական աղբյուրների միջոցով չստուգել Մասնակցի/Մասնակիցների/ կողմից համապատասխանելու վերաբերյալ հայտով ներկայացված հավաստման իսկությունը՝ պատճառաբանված որոշման բացակայության հիմքով:
3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «Քրոու Արմենիա» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2026թ. հունվարի 21-ին, Հանձնաժողովը որոշեց.
1. Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված Մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գները /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1 | «Քրոու Արմենիա» ՍՊԸ | X | 6400000 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցներին:
Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:
Հանձնաժողովը որոշեց.
1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չկիրառել:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված Մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Հակոբյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Լ. Մուրադյան ____________

Ք. Գալստյան ____________

Կ. Գրիգորյան ____________

Թ. Աբգարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________